ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ
№ 16

ՏԱՐԵԿԱՆ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

Թաւրիզում . . . . . 14 ղրան
Գաւառներում . . . . . 20 ղրան

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ռուսաստան . . . . . 4 ռբ. 50 կ.
Թուրքիա . . . . . 50 ղրուշ
Եւրոպա . . . . . 12 ֆրանկ
Ամերիկա . . . . . 2 տոլար 5 ս.

Յայտարարութիւնների վճարը
Առաջին երեսում տողատեղը 5 շահի
Չորրորդ ,, ,, ,, 3 ,,

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 3 շահի

Խմբագրութեան հասցէն՝ Թաւրիզ
ՄԻՏՔ-ի խմբագրութիւն կամ Tauris (Perse)
Rédaction du journal «MITK»

ՄԻՏՔ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Մեզ գրող երից ինքբու�է գրեն պարզ, մաքուր և անպայման թղթի սուպրի երեսի վրայ:
2. Խմբագրութիւնս իրեն է վերապահում իրաւունք՝ ստացուած յօդուածները փոփոխութեամբ և կրճատումներով հրատարակելու:
3. Մենք մերժում ենք ,,ես'' ի և ,,դի'' ի ուղղագրական հերուածը և մեզ ենք վերապահում իրաւունք՝ ստացուած նիւթերը տպել մեր ընդունած ուղղագրութեամբ -ոյ-ով:
4. Չտպուած կարճ յօդուածները չեն վերադարձնում: Ուղարկուած և չտպուած երկար նիւթերը յետ ստանալու համար պէտք է ուղարկել պօստի ծախսը:
5. Չի տպուի ոչ մի յօդուած եթէ դա կեղծ անունի հետ միաժամանակ չի կրի յօդուածագրի անունն ազգանունը:
6. Բաժանորդները թերթ չստանալու դէպքում շուտով տեղեկացնելու են մեզ՝ հակառակ դէպքում խմբագրութիւնս իրեն վերծ է համարում պատասխանատուութիւնից:
7. Չտպուած յօդուածների համար խմբագրութիւնս բացատրութիւններ չի տալիս:
8. Հասցէները փոխելու համար պէտք է մեզ ուղարկել 2 ղրան 10 շահի:

№ 16 — 1912 Թ. — ՇԱԲԱԹ 16 ՅՈՒՆԻՍԻ — 1912 Թ. — № 16

ԿԵՑՑԷ՝ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Մեր խօսքը վերաբերում է Ղալայի հայ ժողովրդին: Կեցցէ՞ նա:

Յունիս 10-ի ընդհանուր ժողովն անհերքելիօրէն ապացուցեց, որ Ղալան իրօք արթուն ու գիտակից ժողովուրդ ունի: Այդ ընդհանուր ժողովը փաստեց, որ նա ամենայն լրջախոհութեամբ լսել է «Մտքի» հարազատ ձայնը:

Ի՞նչ ասաց «Միտքը»:

—Նա նախորդ երկու համարների ուժեղ խմբագրականներով, ֆելիեաօններով, «Թող խօսեն փաստերը» բանաստեղծանով և այլն ... պարզեց Թայֆայի ֆիզիանդմիան և յորդոր կարդաց Ղալացոց ոչինչ չվստահանալ նորան:

«Միտք»-ը քարոզ կարդաց Ղալացոց՝ գալ ընտրական ժողովի բազմաթիւ տասնեակներով, գալ աճերկիւղ, համարձակ եւ վերջ դնել «տդերf»-ի տիրապետութեան եւ կոտրել թայֆական, այդ ոչ-ժողովրդական բանակը:

«Միտք» յայտնագործեց այն կորստաբեր անդունդը, պարզեց ժողովրդին այն ահաւոր վտանգը, որ պիտի բացուէր ու առաջանար, եթէ հայկական հարիւր գլխեայ վիշապը (հիդրան)-Թայֆան-յաջողէր կորզել Ղալայի լուսոյ տաճարները, որպիսիները նա այլասերել, խորտակել և մնկացրել է Լիլաւում, Սալմաստում, Ուրմիում, Էջմիածնում, Թիֆլիզում, Կարնում և այլ տասնեակ վայրերում:

Ուրախ և հպարտ ենք ասելու, որ Ղալայի ժողովուրդը կէտ առ կէտ լսեց մեր քարոզը, նա երևան բերեց հասարակական շահերի խորը գիտակցութիւն և հարիւրից աւելի բազմութեամբ եկաւ յեs շարտելու որովայնի սորուկներին, սերունդ ու կրթավայր փչացնողներին, ,, ընկերներին'' տեղաւորելու մոլուցքով բռնուած սուտ ազգասէրներին:

Մի խօսքով, Ղալայի հայ ժողովուրդը հանդիսաւորապէս եկաւ և Յունիս 10-ի ծխական ընդհանուր ժողովով բացորոշ ու կտրուկ ասաց.

—Թայֆա՛յ, հեռո՛ւ Ղալայից:

Թէպէտ անպատկառութեան հերոսները, չքաշուելով ոչ թեմի առաջնորդից, ոչ սպիտակափառ ալևորներից, ոչ Թաւրիզի persona grata վաճառականապետից, ոչ համալսարանական բժիշկներից և ոչ էլ ճակատի և ազնիւ աշխատանքի քրտինքով թոշակ վճարող պատուաւոր ծնողներից, վիժեցրին ընտրութիւնը, այնուամենայնիւ նոքա զարհուրեցին, շատ լաւ զգացին, որ իրենց դէմ կանգնած է լուռ ու անբարբառ հսկայ ժողովուրդ: Ժողովուրդը, որ իր լռութեամբ խայտառակութեան հերոսների ականջն ի վեր շեփորահարում էր:

-Մանուկներ, ուր ժողովուրդ-առիւծն է մռնչում, այնտեղ աղուէսներն ու ճագարները (չաղկալ) այլ ևս շահատակել չպիտի ժպրհեն, չրպիտի համարձակուեն:

Եւ, իրօք, համեմատեցէք այդ ժողովի երկու կողմերը: Նժարների մէջ դրէք ժողովրդի մարդոց և Թայֆայականներին և կտեսնէք թէ արդիւնքը, պատասխանը որքան ապտակիչ է հակաժողովրդականներին, որոնց հետ գրկախառնուել էին բրօշիւրային Մարքսիստները, որոնց ազնուագոյն ընկերները երէկ Թիֆլիզում «Կայծում» և «Հոսանքում» անվերջ և ամեն օր շանթում էին ազատ խօսքի դահիճներ այդ Թայֆայականներին: Սոսկալի՜ անկում:

Յունիս 10-ին, Թատերասրահում կարծես բազմել էր հին Հռովմի պատկառելի ծերակոյտը:

Մի չտեսնուած ընդհանուր ժողով Թաւրիզում:

Սպիտակափառ ծերունիներ, առաջին կարգի և պատուաւոր վաճառականներ՝ իրենց աւագով, դպրոցի նախկին և երախտաւոր հոգաբարձուներ, զաւակատերեր, համալսարանական բժիշկներ, մի խօսքով 90-110 հոգի բուն իրաւասու ծխականներ, որոնցից շատերը 30-50 տարիներից ի վեր իրենց դրամներով դպրոց են պահել:

Ո՞վքեր էին կանգնած այս պատկառելիների դիմաց:

—Մանուկներ, որոնք գլխիկոր թողին ժողովարարը, երբ չափաբերական մատեանով ստուգուեց, որ խարդախութեամբ ձայն տալու էին բերուել: Երիտասարդներ, որոնք ձրի սովորելեն նոյն Արամեան դպրոցում, և այսօր բահ ու բրիչով եկել էին քանդելու այդ դպրոցը և միջոց չէին տալիս որ խօսէին քաղաքի հայրերը, ոսկիներ շահողները կամ վրճարողները կամ նոքա, որոնք ժողովրդի, տէրութեան և հիւպատոսների մօտ մի մի մեծութիւններ են և իրօք դպրոց պահողներ:

Խոհարարներ, որոնց՝ խոհանոցներից քարշում և բերում էին Թայֆայի միամիտ ագէնտները:

Մի խօսքով ժողովրդի հակառակորդ բանակում, գրեթէ, չկար մէկը, որ մեր գժբաղդ դպրոցի հետ բարոյական ու նիւթական որև է կապ ունեցած լինէր: Չկար գէթ մէկը այդ մեծախօսների բանակում, որ իր անձով կամ անցեալով վստահութիւն ունենայ մեր ժողովրդից 5 շահի փող ուղելու յօգուտ կրթական հաստատութեան:

Պարզ ասած, այդ անյարիր բանակում չկար այնպիսի մէկը, որին կարելի լինէր գլխարկ վերցնել և յարգանքի արժանի դարձնել:

—Այսպէս՝ յանուն մանուկ սերնդի կրթական տուրբ գործի, հրապարակ էին եկել կոկորդիլոսի արցունք թափող անիրաւասու, անչափահաս, մուրացուած և ոչ հեղինակաւոր մարդիկ մի կողմից, իսկ միւս կողմից՝ անշահախնդիր, անկուսակցական, բուն տեղացի, իրաւասու, հեղինակաւոր և դպրոցի սիւն ու յենարան եղող մարդիկ՝ չախչախիչ մեծամասնութեամբ:

Պատիւ այդ մեծամասնութեան, որ իւր թուի գերակշռութեամբ և հանդիսաւոր լռութեամբ այսահարել էր ամօթ ու պատկառանք չիմացողներին, որոնք մի աւելորդ անգամ ևս զգուեցրին ժողովրդին իրենցից և անսուտ դարձրին այն համոզմունքը, որ ոչինչ կապ չի կարող լինել Թայֆայի և ժողովրդի միջև:

Կեցցէ՞ ժողովուրդը:

ՅԵՏԻՆ ՄՏՔԵՐ

ԿԱՄ

Գերեզմանատորութիւն Ղալայի դպրոցների շուրջը:

—

Լիլաւան այլ ևս կորած է Թայֆայի համար և ժողովուրդն էլ սկսել է քիչ-քիչ արթնութեան նշաններ ցոյց տալ: Արդ, ինչ անել, մտածում է, Թայֆան:

Եւ, ահա, նա հնարել է մի շատ իմաստուն միջոց, ոչ միայն ձեռքից գնացած Լիլաւան յետ ստանալու նորէն, այլ և իր մահաբեր ճանկերը քցելու քաղաքիս երեք դպրոցներն էլ:

Յաւալին Թայֆայի այս ստորերկրեայ մանուվրը չէ, այլ այն միամիտ պատրաստականութիւնը, որով առաջնորդը ընդառաջում է իրեն ամեն քայլափոխում և ամեն հարցում վիրաւորող և յետ ժղող այդ «փրկիչներին»:

Թայֆան մտածում է. Արամեան դպրոցը փող ունի: Նրա փողով կարելի է պահել թէ Ղալան և թէ ձեռքից դուրս եկած Լիլաւան: Ուստի ինչպէս անի որ հասնի իր նպատակին:

—Նա (Թայֆան) ծրագրում է. ընտրութիւններն այնպէս անել, որ կեդրոնականի հոգաբարձուներից 2-3 հոգի ընտրուեն Ղալայի համար, նոյքան էլ՝ Լիլաւի: Այսպիսով կենտրոնականի Թայֆական*) հոգաբարձուներն իրենց ճանկերը քցած կլինին քաղաքիս երեք դպրոցները, որոնք պիտի կառավարուեն մի տեսչով և իրենց ջոկած ուսուցիչներով:

Այս յետին մտքերը, ինչպէս ասացինք, կամ չեն գիտակցւում և կամ հաւանութիւն են գտնում թեմիս առաջնորդի կողմից, որպէս զի, գոնէ, դրանով և այդ անուղղակի միջոցով նա իր պաշտօնից հեռացուած տեսնի Ղալայի ներկայ տեսչին:

Ղալայի՛ ժողովուրդ, խաղացուում է մի վատ խաղ ձեր դպրոցի շուրջը: Անյատակ կոկորդներ են բացուած ձեր դպրոցների դրամների համար: Ուրիշ խօսքով՝ «փրկիչները» ուզում են փորել նաև ձեր դպրոցների գերեզմանը: Բայց գործն այնպէս են տանում, որ դուք արտաքուստ բան չէք նշմարում: Մարդիկ խօսում են «գեղեցիկ» գաղափարի մասին, իսկ այդ գաղափարի կամ միացման աստառը, իսկական

*) Բացառութիւն են երկուսը:

միտքն այն է, որ խլեն ձեր դպրոցները։

Դուք հակառակ կացէք այդ դաւին։

Տեսուչ Տէր-Վարդանեանը կարող է ամենևին չլինել։ Նրան հեռացրած լինելու համար հարկաւոր չէ Ղալայի դպրոցները վտանգել և ստիպել ժողովրդին, որ նա անգիտակցաբար այդ դպրոցները բերի յանձնի Լիլաւան քանդողներին։

Ղալացիք, մենք բացեցինք գաղտնիքը, այժմ ձեզ է մնում պահել կամ սպանել ձեր դպրոցները։

Ձեր նշանաբանը պէտք է լինի Ղալայի դպրոցները կամ փակ պիտի մնան և կամ բացառապէս Ղալացոց ձեռքում և ընաւ երբէք այնտեղ Թայֆայական։

Ա. Տ.-Վ.

ՅԱՆԳԱՒՈՐ ՖԷԼԻԵՏՈՆ

(Նուէր Միջազգային պզտիկ գործչին)

—Պզտիկ ճզտիկ,
—Թզուկ մզուկ,
—Ճանճիկն մանճիկ,
—Խունջիկ մունջիկ,
—Կիւրակի օր՝
—Առաւօտեան,
—Շտապում էր
—Ընտրութեան։
—Բարև փեսայ,
—Ուստա Իսա,
—Էդ ինչպէս էք,
—Ձեզ ոնց տեսայ.
—Ես ձեզ մուխլիս,
—Գնանք մէջլիս.
—Էսա ամբողջ
—Մի շաբաթա
—Հոգիս էլաւ
—Ձեզ մանգալով։
—Գիտէք ինչ կայ,
—Թէ Աստուած տայ
—Ձեր շնորհիւ
—Մենք տէր լինինք
—Ղալա թաղի
—Դպրոցներին,
—Աստուած վկայ,
—Կասկած չկայ
—Որ միասին՝
—Ձեր ովլադով
—Կվայելենք
—Մենք լազաթով...
—Էլ ինչ ասեմ
—Լաւ է չասեմ
—Կասկածների
—Ձկայ տեղի։
—Մի վախենաք
—Մենք շատուոր ենք.
—Կարլ Մարքսի
—Շակիրտներին
—Մենք շատ մօտ ենք։
—Ձաքօն-Մաքօն
Թաթոս Ավին
—Միրզա Նաբին
—Բուդաղ աղի
—Աշփազ բաշին,
Մենք կըքերթենք
Նրանց կաշին։
—Համա համա
—Ասածներս
—Ձեզ մօտ մնայ։
—Դէհ, շուտ արէք,
—Մարդիկ տարէք
—Էսօր արէք
—Վաղը պարէք։
Այսպէս ահա
Սեթեանը
«Առաւօտի»
Փահլեանը՝
Ձաքօ դաշի
Յետևն ընկած՝
Ձօռով գիւլջով
Թևից բռնած՝
Իբրև համայնք
Ծուխ ժողովուրդ,
Բաց էր թողնում
Մեր սրահը։
Աթոռն առնում՝
Վրան դնում,
Մանրամասն
Պատմում, ասում
Օխտը պորտը
Հէրը մէրը,
Ախպէրները,
Ծնած տեղը։
Իրենց գեղը,
Մէկ մէկ ասում
Եւ հաստատում,
Էլ կասկածի
Տեղ չէր թողնում՝
Որ՝ զուտ հայ է
Մեծ թայֆայ է
Լուսաւորչի
Իրեն տոհմից,
Վկայում էր
Իրեն կողմից։
Էլ կաթոլիկ,
Դաշնակցական,
Բողոքական,
Տականք, մականք,
Ղարիբթունից
Նոր տեղ հասած՝
Դեռ բէզարած՝
Տուն չմտած՝
Սէթօ Ապին
Քուչից բռնած
Ուսին առած՝
Թըրը՛փ ահա
Գիւրուփպադան
Գլորում էր
Դէպի, սրահ։
—Սէթօ, Ապի.
—Իսէր Աստծոյ,
—Ինձ մի խաբի
—Ես ձայն չունեմ
—Ես օտար եմ
—Կաթոլիկ եմ
—Թող որ գնամ
—Գործիս մնամ։
—Մի վախեցի
—Ասա հայ եմ՝
—Է՛ս թաղեցի.
—Աթոռն առ
—Ու պինդ նստիր
—Խստիւ խօսիր
—Գործ դրստիր։—
—Ջանմ-Գեօղմ
—Էլ չեմ գեօղմ
—Իմ պատիւս
—Ձօռով տարար,
—Ձեզ էլ մեզ էլ
—Խարաբ արար։
—Թէ մարդ ունիք
—Հարիւր հոգի՝
—Կասկածելի
—Ձէ ոչ ոքի,
—Մէյդան եկէք
—Դպրոցների
—Տէրը դուք էք։
—Եթէ չունիք՝
—Մի ելք ունիք՝
—Մի զրմփոց
—Տուր ու դմփոց,
—Եւ ամեն ինչ
—Կրգրտնի վերջ։
Սէթօ ապու
Գոյն սպռեց,
Զրհամբերեց,
Խէչօ դաշին
Մէջ տեղ բերեց.
Էլ Տէրտէրի
Սրբազանի
Ժողովրդի
Հէրն ու մէրը
Քիրն ախպէրը,
Բան չմնաց,
Որ էլ չասէր.
Ելքն այս էր։
Մարդիկ գացին
Իրենց գործին։
Սէթօ ապին
Քեօռ ու փոշման
Փուխթա-փուխթա
Դամաղ սուխթա,
Մտածում էր.
—Ախ էս ինչ էր,
—Էսդէկ-Էսէր
—Իրար չկամ՝
—Յանկարծ այսօր
—Մօտ բարեկամ՝
—Մէյդան եկանք
—Ժողովրդից
—Ապտակ կերանք։
—Վալահ բիլահ
—Էս մեզ խրատ
—Էլ չցանենք
—Կրտաւահատ,
—Ապա թէ ոչ՝
Միշտ կայ պատրաստ,
«Գորշ» մաստայի
Ապտակը սաստ։

Ֆիլ։

ՂԱԼԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴ!!

—

«Ի կործանել բարւոյն միաբանին դէք»

պատում է առածը.

Ձեր դպրոցը կործանելու համար միաբանել են սուտ և հատ ու կէնտ «սոցիալիստները» և դրամակուլ թայֆայականները, եկէք կիրակի օրը ընտրութեան, եկէք հարիւր և աւելի մարդկանցով, եկէք համարձակ և փշրեցէք այդ կեղծ միաբանութիւնը և ապահովէ՛ք Ղալայի դպրոցները կործանարարներից և այլասերիչներից։

Խմբագիր՝ հրատարակիչ
Ա. Տ. Վարդանեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՑՈՒԵԼ Է ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑՈՒՄ ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ բուժարան (լէչէբնիցա)

Արժէքները չափազանց մատչելի են։ Աղքատները բշժկւում են բոլորովին ձրի։ Հիւանդներ ընդունւում են առաւօտեան ժամը 8—1, երեկոյեան ժամը 3—6

ՀԻՄՆԱԴԻՐ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ՝ ՄԱՏԻՆԵԱՆ

МАГАЗИНЪ ПАРИЖЪ
MAGAZINS DE PARIS-TABRIZ.
PROPRIÉTAIRE J. D. THOMASSIAN

ՓԱՐԻԶ ՄԱԳԱԶԻՆ

ԿԱՆԱՑԻ ՆՈՐ ԲԼՈՒԶՆԵՐ

ՓԷՇԵՐ ԵՒ ԻՒՊԿԱՆԵՐ

ՆՈՐ ԿՏՈՐՆԵՐ
ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԳՆԻ ՊԱՏԻՍՏՆԵՐ
ՕՁԱՂՆԵՐ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿԻ
ԵՒ ԽԻՍՏ ԱԺԱՆ
ՇՏԱՊԵՑԷՔ ՕԳՏՈՒԵԼ ԱՌԻԹԻՑ

ԳԱՐՈՒՆ

(ՄԱԳԱԶԻՆ ՄԻՍԱԿ ԲԺՇԿԵԱՆԻ)

Նոր ստացել են ՄԵՏՐՔՍԵՑ ԸՆՏԻՐ ՐԼՈՒԶՇՈՒՆԵՐ, ՍԳԻՏԿԿ ԼԵՐ ՔԸԹՈՆՆԵՐ, տղամարդկանց ԿՈՇՏ ԳԼԽԱՐԿՆԵՐ, ԵՐԿՈՒՏԿ ՎԷՐԱՏՆԻԿՆԵՐ, ճաշակաւոր ԴԵԼՍՈՒՆԿՆԵՐ, անձեռոցիկներ, երեխաների գլխարկներ և զանազան տեսակի հետաքրքիր խաղալիքներ։

Ընդունելով ԵԼՐԲԲՔ ՍԷՑԼԸՆՈՎՆՆԵՐԻ ԸՈՒՆՏՐԱԿԱՆ ՏՆ ներկայացուցչութիւնը, պատիւ ունիմ յայտարարելու ի գիտութիւն սպառողների, որ ընդունում եմ նոյն ֆիրմայի պատրաստի պալիրոտների պալիրոտների և ծխախոտների պատէրները։ Պատէրներ կարելի է տալ 50000 հատից սկսած. իրրև կանխավճար վերցնում ենք 100-ին 15 0 | 0 գները հաշւում ենք գործարանի հաշւով, ցանկացողները կարող են վերցնել պրէյսկուրանտ։

مریضخانهٔ تبریز

این روزها شروع کرده‌ایم بمعالجهٔ هر قسم مرضای مقیم و غیر مقیم را هر روز پذیرای خواهد شد در مریضخانه از دو ساعت بطهر مانده الی ظهر و مرضای بی‌بضاعت هرگاه از بکلربکی گری نوشته بیاورند مقیم و غیر مقیم مجانی به کمال مواظبت واهتمام معالجه خواهد شد

مدیر مریضخانه دکتر واهان گویرك‌یان

ТАВРИЗСКАЯ ГОРОДСКАЯ
Больница

Возобновился амбулаторный и стаціонарный пріемъ больныхъ, ежедневно отъ 10—12 часовъ.

Бѣдные по запискѣ отъ г. Байларбеги принимаются безплатно

Завѣдующій больницей
докторъ Ваганъ Геворковъ